

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N «ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/7»**

ք. Երևան

«14» 01 2021 թ.

Սոցիալական ապահովության ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Հ. Գևորգյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ընդ որում, 1-ին չափաբաժնի համար՝ ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժնի համար՝ ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

3-րդ չափաբաժնի համար՝ ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով, համաձայնագրով հաստատված վճարման ժամանակացույցով սահմանված պայմաններով:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝  $V = V_0 / (1 + r)^n$ , որտեղ՝

V-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

V<sub>0</sub>-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

n-ը ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

r-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

p-ն մատուցված ծառայության քանակն է:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>21</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

<sup>21</sup> Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պարզաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Սոցիալական ապահովության ծառայություն

ՀՎՀՀ 02505511

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական

վարչություն

Հ/Հ 900011556355



### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ

ք.Երևան, Ռուբինյանց 31

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Հ/Հ 1510012745550100

ՀՎՀՀ 00873228



«14» Հավելված N 1  
 2018 թ. կնքված  
 «ԱՄՏ 9<ՇՁԲ-217» ծածկագրով պայմանագրի

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

		Ծառայություն					ՀՀ դրամ	
1	2	3	4	5	6	7	8	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր արավելագույն գինը / ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**	
1	5011130/505	3 հատ Chevrolet Cruze (բոլորն էլ արտադրված են 2011 թ-ին, VIN - KL1JA6959BK076032, VIN - KL1JA6959BK040996, VIN - KL1JA6959CK533955) ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ ըստ կից ներկայացված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրի և պայմանագրով հաստատված արավելագույն գնի սահմաններում: Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ կիրականացվի Պայմանագրով նախատեսված բանաձևով: Ծառայության մատուցումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է ըստ Պատվիրատուի պահանջի՝ տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում արանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:	Դրամ	1200000	1	Ք. Երևան, Նալբանդյան 13	Համապատասխան ֆինանսական միջոցների արավելագույն և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրերի կնքման դեպքում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու	
2	5011130/506	1 հատ Nissan Teana (արտադրված 2011 թ-ին, VIN - JN1BBUJ32Z0003773) ավտոմեքենայի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ ըստ կից ներկայացված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրի և պայմանագրով հաստատված արավելագույն գնի սահմաններում: Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ կիրականացվի Պայմանագրով նախատեսված բանաձևով: Ծառայության մատուցումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է ըստ Պատվիրատուի պահանջի՝ տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում արանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինման ծառայությունների	Դրամ	400000	1	Ք. Երևան, Նալբանդյան 13	Համապատասխան ֆինանսական միջոցների արավելագույն և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրերի կնքման դեպքում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու	

	3	5011130/507	<p>փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:</p> <p>1 հատ Volkswagen Passat (արտադրված 2007 թ-ին, VIN - WVVZZZ3CZ7P123442) ավտոմեքենայի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ ըստ կից ներկայացված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրի և պայմանագրով հաստատված առավելագույն գնի սահմաններում: Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ կիրականացվի Պայմանագրով նախատեսված բանաձևով:</p> <p>Ծառայության մատուցումը յուրաքանչյուր դեպքում իրականացվում է ըստ Պատվիրատուի պահանջի՝ տրանսպորտային միջոցը Կատարողի տեխնիկական կայանում գրանցվելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների դեպքում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:</p>				<p>օրվանից մինչև «20» դեկտեմբեր 2021թ. ներառյալ</p>
			<p>Դրամ</p> <p>400000</p> <p>1</p>	<p>Ք. Երևան, Նալբանդյան 13</p>			<p>Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրերի կնքման դեպքում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև «20» դեկտեմբեր 2021թ. ներառյալ</p>

**Ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայությունները ըստ կից ներկայացված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրի և պայմանագրով հաստատված առավելագույն գնի սահմաններում:**

h/h	SU-1 (տեխնիկական գնման / դիագնոստիկական) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, բալադերի և այլ օժանդակ կտրիքի անվանումները	Названия ТС-1 (техническая / диагностическая) ТС-2 (ремонт), услуги и запчасти и другие вспомогательные материалы, используемые в транспортных средствах ТС-2 (тип) / дивиденды 1-я доза	Չափաբաժին 1 /տր " 1 " /CPV-5011130/505/ Chevrolet Cruze (արտադրված 2011 թ-ին)	Չափաբաժին 2 /տր " 2 " /CPV-5011130/506/ Nissan Teana (արտադրված 2011 թ-ին)	Չափաբաժին 3 / տր " 3" /CPV-5011130/507/ Volkswagen Passat (արտադրված 2007 թ-ին)
1	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները	3	4	5	6
1	Բռնկման համակարգի ստուգում	Проверка системы зажигания	5000	5000	5000
2	Սարքեման համակարգի ստուգում	Проверка системы охлаждения	5000	5000	5000
3	Յրոման համակարգի ստուգում	Проверьте масляную систему	5000	5000	5000
4	Արտաքին համակարգի ստուգում	Проверка выхлопной системы	5000	5000	5000
5	Կրողման համակարգի ստուգում	Проверка системы сцепления	5000	5000	5000
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	Проверка коробки передач	5000	5000	5000
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	Проверка автоматической коробки передач	5000	5000	5000
8	Բռնկման համակարգի ստուգում	Проверка системы зажигания	5000	5000	5000
9	Սարքեման համակարգի ստուգում	Проверка системы охлаждения	5000	5000	5000
10	Յրոման համակարգի ստուգում	Проверьте масляную систему	5000	5000	5000

11	Մուտքային համակարգի ստուգում	Проверка выхлопной системы	5000	5000	5000	5000
12	Կտրորան համակարգի ստուգում	Проверка системы сцепления	5000	5000	5000	5000
13	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	Проверка работы коробки передач	5000	5000	5000	5000
14	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	Проверка работы автоматической коробки передач	5000	5000	5000	5000
15	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	Проверка перевода карты	5000	5000	5000	5000
16	Բաշխիչ տուսի աշխատանքի ստուգում	Проверка работы распределительная коробки	5000	5000	5000	5000
	<b>SU-2 ներառվող ծախսերունների անվանումները</b>	<b>Наименования услуг, включенных в TS-2</b>				
	<b>1. Շարժիչ</b>	<b>1. Двигатель</b>				
1	Շարժիչի համուսն և տեղադրում	Снятие и установка двигателя	75000	80000	80000	80000
2	Շարժիչի բանդրում արատավորում և հավաքում	Снос и разборка двигателя	120000	120000	120000	120000
3	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	Капитальный ремонт двигателя, включая все работы	180000	180000	180000	180000
4	Շարժիչի գլխիկի համուսն տեղադրում միջադիրի փոխարինումով	Снятие головки двигателя путем замены подушки	50000	70000	50000	50000
5	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	Ремонт головки двигателя, сварка полировкой	60000	60000	60000	60000
6	Շարժիչի գլխիկի փական-ների փոխարինում հղկումով և խտանալիքով 1 կ-տ	Запасные клапаны головки двигателя с абразивом и отверткой 1 кг	50000	50000	50000	50000
7	Վառոցի մոմի բնիկի նորոգում	Ремонт свечи зажигания	25000	25000	25000	25000
8	Շարժիչի փականների զույգանակների փոխարինում	Замена пружин клапанов двигателя	30000	30000	30000	30000
9	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	Замена сальников 1 кг	40000	50000	50000	50000
10	Հրիչների կամ հիդրո-հրիչների փոխարինում 1 կ-տ	Замена горелок или гидрогорелок 1 кг	40000	40000	40000	40000
11	Շարժիչի միացաօղորի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	Замена цилиндров двигателя, главных и роликовых подшипников	120000	120000	120000	120000
12	Ծնկանն լիտերի հղկում	Абразивная полировка вала	25000	25000	25000	25000
13	Ծնկանն լիտերի համուսն տեղադրում կամ փոխարինում	Установка или замена снятия вала	100000	100000	100000	100000
14	Ծնկանն լիտերի ներդրակ-ների փոխարինում 1 կ-տ	Замена валов роликовых валов 1 кг	80000	80000	80000	80000
15	Ծնկանն լիտերի ատամնախիլի փոխարինում	Замена зубьев шестерни	25000	25000	25000	25000
16	Ծնկանն լիտերի ուղղում	Коррекция вала	50000	50000	50000	50000
17	Ծնկանն լիտերի առջևի խցուկի փոխարինում	Замена прокладки вала переднего сальника	25000	30000	30000	30000
18	Ծնկանն լիտերի հետևի խցուկի	Замена сальникового вала задней прокладки	60000	60000	60000	60000

	փոխարինում					
19	Շարժիչի բլոկի փոխարինում	Замена блока двигателя	120000	120000	120000	120000
20	Շարժիչի գլանի փոխարինում (гильзовка)	Замена цилиндра двигателя (гильзовка)	65000	65000	65000	65000
21	Մխոցի փոխարինում 1 հատ	Замена цилиндра 1 шт.	40000	40000	40000	40000
22	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена распределительного вала	25000	25000	25000	25000
23	Բաշխիչ լիսեռի ակնոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена распределительного вала шпихты	40000	40000	40000	40000
24	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	Замена рычага распределительного вала	15000	15000	15000	15000
25	Փոկամիկի փոխարինում	Замена поканнивов	20000	20000	20000	20000
26	Շարժիչի ստանաավորվող փոխարինում	Замена зубьев двигателя	30000	30000	30000	30000
27	Շարժիչի շեյվափոխարինում	Замена цепи двигателя	60000	60000	60000	60000
28	Շարժիչի կարտերի նորոգում (ետակցում)	Ремонт сварочных работ двигателя (сварка)	15000	15000	15000	15000
29	Շարժիչի կարտերի միջադիրի փոխարինում	Замена подушки сиденья двигателя	15000	15000	15000	15000
30	Շարժիչի բարտերի հանում, տեղադրում մաքրումով	Удаление карт двигателя, установка с очисткой	15000	15000	15000	15000
31	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	Моторное масло Замена двигателя	70000	70000	70000	70000
32	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	Ремонт, очистка масляного насоса двигателя	50000	50000	50000	50000
33	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	Очистка масляного насоса двигателя	25000	25000	25000	25000
34	Յուղի ծորակի փոխարինում	Замена масляного крана	20000	20000	20000	20000
35	Օդաբաշակ փոքրակի փոխարինում	Замена вытяжки	10000	10000	10000	10000
36	Բ/լիսեռի կապիտիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена крышки вала	15000	15000	15000	15000
37	Շարժիչի կապիտիչի միջադիրի փոխարինում	Замена крышки двигателя	15000	15000	15000	15000
38	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена ротаंगा	50000	50000	50000	50000
39	Շարժիչի կապիտիչի փոխարինում	Замена клапана двигателя	15000	15000	15000	15000
40	Շարժիչի կապիտիչի միջադիրի փոխարինում	Замена клапана двигателя	15000	15000	15000	15000
41	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	Замена двигателя 1 шт	55000	55000	55000	55000
42	Մխոցային օդակների փոխարինում 1 կ-տ	замена цилиндров 1 кт	80000	80000	80000	80000
43	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	Замена приводного вала двигателя	25000	25000	25000	25000
44	Ատամանիվի փոխարինում	Замена зуба	20000	20000	20000	20000
45	Ատամանիվի փոկի փոխարինում	Замена зубного уплотнения	30000	30000	30000	30000
46	Ատամանավոր փոկի պատյամի	Замена корпуса зубного	5000	5000	5000	5000

	փոխարինում	уплотнения			
47	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	Замена сухарик1 к / т	10000	10000	10000
48	Շարժիչի համարադրիչի փոխարինում	Замена редуктора двигателя	30000	50000	50000
49	Շարժիչի փուկի հողովակի փոխարինում	Замена сцепления сальника двигателя	35000	35000	35000
50	Շարժիչի հողովակի արանցքավալի փոխարինում	Замена подшипника прицепа двигателя	35000	35000	35000
51	Շարժիչի արջկի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	Замена передней крышки двигателя, снятие, установка путем замены сиденья	50000	60000	60000
52	Շարժիչի յուղի արանքաչափիչի (բցս) իրանի փոխարինում	Замена датчика моторного масла (кГц)	10000	10000	10000
53	Շարժիչի փուկի ձգիչի փոխարինում	Замена сальника двигателя	15000	15000	15000
54	Շարժիչի փուկի ձգիչի նորոգում	Ремонт сальника двигателя	20000	20000	20000
55	Շարժիչի զամսանդի փոխարինում	Замена шпильки двигателя	15000	15000	15000
56	Շարժիչի զամսանդի փոխարինում բնիկի նորոգումով	Замена корпуса двигателя с ремонтом слота	10000	10000	10000
57	Չվիկի հերոյսի փոխարինում	Замена винтов головки	2000	2000	2000
58	Ծնկածև լիսեթի հերոյսի փոխարինում	Замена вала двигателя с ремонтом паза	20000	20000	20000
59	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	Установка электрооборудования двигателя	25000	25000	25000
60	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	Снятие и установка системы подачи топлива в двигатель	25000	25000	25000
61	2. Ռեկավարման, սնման և յուղման համակարգ	2. Система рулевого управления, подачи и смазки			
62	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	Замена масла и масляного фильтра	2000	2000	2000
63	Ավտոմեքենայի յուղում	В машинном масле	1000	1000	1000
64	Համակարգչային ակտորոշում, թերությունների վերացմանք	Компьютерная диагностика с устранением дефектов	6000	6000	6000
65	Յուղի ռադիատորի փոխարինում	Замена масляного радиатора	15000	15000	15000
66	Յուղի ռադիատորի նորոգում	Ремонт масляного радиатора	20000	20000	20000
67	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	Замена коллектора двигателя	20000	20000	20000
68	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	Замена коллектора двигателя	20000	20000	20000
69	Վառքի մոմի փոխարինում 1 կ-տ	Замена свечи зажигания, 1 кт	16000	16000	16000
70	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	Замена мягкого фильтра топливного фильтра	15000	15000	15000
71	Օդի գտիչի փոխարինում	Замена воздушного фильтра	2000	2000	2000
72	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена расходомера воздуха	10000	10000	10000
73	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	Снятие и установка шланга воздушного фильтра	10000	10000	10000

73	Ինձեկտորի բոցամուղների փոխարինում	Замена масла в двигателе	15000	15000	15000	15000
74	Ինձեկտորի բոցամուղների մաքրում	Очистка инжекторных дымоходов	25000	25000	25000	25000
75	Բոցամուղի կտրվափրում	Кодирование зажигания	10000	10000	10000	10000
76	Ինձեկտորի բոցամուղիխտարակերիփոխարինում	Замена жидкотопливных котлов	10000	10000	10000	10000
77	Բենզամուղիչի փոխարինում	Замена бензинового двигателя	20000	20000	20000	20000
78	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	Замена топливного фильтра жесткой очистки	10000	10000	10000	10000
79	Վառելիքի բաքի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена топлипровода	10000	10000	10000	10000
80	Բռնվման կարգավորում	Настройка зажигания	5000	5000	5000	5000
81	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена блока управления	15000	15000	15000	15000
82	Ղեկավարման բլոկի վերանորոգում	Ремонт блока управления	100000	100000	100000	100000
83	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка топливного бака, а также замена	50000	50000	50000	50000
84	Վառելիքի բաքի մաքրում	Очистка топливного бака	50000	50000	50000	50000
85	Օդի ծախսի տվիչի փոխարինում	Замена датчика расхода воздуха	15000	15000	15000	15000
86	Հրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	Замена датчика температуры воды	20000	20000	20000	20000
87	Հրի խողովակի, փողրակի փոխարինում	Замена водопровода, шланга	15000	15000	15000	15000
88	Բենզաբաքի բենզամուղիչի ցանցի փոխարինում	Замена бензинового бензинового двигателя	10000	10000	10000	10000
89	Բենզաբաքի բենզամուղիչի ցանցի մաքրում	Очистка бензобаковой цепи бензинового двигателя	10000	10000	10000	10000
90	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	Замена датчика давления масла	15000	15000	15000	15000
91	Տվիչի փոխարինում	Замена датчика	10000	10000	10000	10000
92	<b>3. Սառցման և արտածման համակարգ</b>	<b>3. Система охлаждения и выпуска</b>				
92	Հովիարի փոխարինում	Замена вентилятора	10000	10000	10000	10000
93	Հովիարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка уплотнения вентилятора или установка или замена	15000	15000	15000	15000
94	Ուառիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка радиатора или замена	12000	12000	12000	12000
95	Ուառիատորի նորոգում	Ремонт радиатора	55000	55000	55000	55000
96	Շերտափեղկիփոխարինում	Замена жаложи	10000	10000	10000	10000
97	Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	Замена ползушка управления подъемником	10000	10000	10000	10000

98	Ընդարձակող բացի փոխարինում	Замена расширительного бачка	15000	15000	15000
99	Ընդարձակող բացի փողրակի փոխարինում	Замена шланга расширительного бачка	10000	10000	10000
100	Զրիծորակի փոխարինում	Замена водопроводного крана	25000	25000	25000
101	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	Замена резинового шланга для системы охлаждения	5000	5000	5000
102	Հովիարի շարժիչի համում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена двигателя вентилятора	15000	15000	15000
103	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	Замена радиатора печи, все работы включены	50000	50000	50000
104	Վառարանի ռադիատորի նորոգում	Ремонт радиатора отопления	55000	55000	55000
105	Վառարանի շարժիչի փոխարինում	Замена двигателя духовки	35000	35000	35000
106	Թերմոստատի փոխարինում	Замена термостата	18000	18000	18000
107	Զրի մոխի փոխարինում միջադիրով	Замена водяного насоса с колдочкой	50000	50000	50000
108	Զրի մոխի միջադիրի փոխարինում	Замена водяного насоса	50000	50000	50000
109	Գեներատորի փոխ փոխարինում	Замена уплотнения генератора	15000	15000	15000
110	Գեներատորի փոխի ծող հողվակի փոխարինում	Замена натяжного трейлера уплотнения генератора	15000	15000	15000
111	Զրի ռադիատորի վերանորոգում	Ремонт водяных радиаторов	55000	55000	55000
112	Թերմոստատի միջադիրի փոխարինում	Замена подушки термостата	15000	15000	15000
113	Խլարարի համում և տեղա-դրում կամ փոխարինում	Снятие и замена или замена глушителя	18000	18000	18000
114	Խլարարի 1 հատնտրովակի փոխարինում	Замена 1 трубного цилиндра	10000	10000	10000
115	Խլարարի անուրի (խաւղ) փոխարինում	Замена глушителя (хамуг)	5000	5000	5000
116	Խլարարի ներդիրի փոխարինում	Замена вкладыши глушителя	5000	5000	5000
117	Խլարարի կախոցի փոխարինում	Замена подвески глушителя	5000	5000	5000
118	Հովացման հեղուկի փոխարինում	Замена охлаждающей жидкости	3000	3000	3000
<b>4. Կցորդում և ՓՏ</b>					
119	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	4. Приложение и передача Снятие и установка конвертера АКП	50,000	50,000	50,000
120	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	Замена дискаведущего к АКП	50,000	50,000	50,000
121	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	Снятие и установка АКП	65,000	65,000	65,000
122	ԱՓՏ-ի վերանորոգում	Ремонт АКП	450,000	450,000	450,000
123	ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	Замена масляного фильтра АКП	25,000	25,000	25,000
<b>7. Կախոց</b>					
124	Տրավերսի հանում և տեղա-դրում կամ փոխարինում	7. Подвеска Траверса снятие и установка	35000	35000	35000

125	Չախ կամ աջ հորակալի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена левого или правого соединения	15000	15000	15000
126	Արջևի անվակուրտի առանցքավալի փոխարինում	Замена подшипника переднего колеса	20000	20000	20000
127	Արջևի անվակուրտի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена передней шины	20000	20000	20000
128	Հետևի անվակուրտի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена задней шины	20000	20000	20000
129	Հետևի անվակուրտի առանցքավալի փոխարինում	Замена подшипника заднего колеса	15000	15000	15000
130	Անվակուրտի գամաստեղի և հեղույսի փոխարինում(ծեկ անիսի համար)	Замена заклепок и звездочек (для одного колеса)	5000	5000	5000
131	Չախ կամ աջ հորակալի խտարուների փոխարինում	Замена левого или правого составного запястья	10000	10000	10000
132	Ցնցամեղմիչի թառակի փոխարինում	Замена амортизатора	15000	15000	15000
133	Արջևի զալպանակի փոխարինում	Замена передней пружины	5000	5000	5000
134	Արջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена переднего амортизатора	12000	12000	12000
135	Հարվածամեղմիչի վրանների փոխարինում	Замена амортизаторов	10000	10000	10000
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка нижнего рычага или замена	10000	10000	10000
137	Ներքևի լծակի վրանների փոխարինում 1 հատ	Замена нижних рычажных тенгов 1 шт.	7000	7000	7000
138	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	Замена нижнего рычага болта	5000	5000	5000
139	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	Замена подушки безопасности	10000	10000	10000
140	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	Снятие и установка или замена верхнего рычага	10000	10000	10000
